ՏՐԱՆՍ ՆՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ՀՈԿՏԵՄԲԵՐ - ՆՈՅԵՄԲԵՐ 2020թ.

№15

ՀՈԿՏԵՄԲԵՐԻՆ ՏԵՂԻ ՈՒՆԵՑԱԾ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ՇԱՐՔ ----------2
ԱՄՍԱԿԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ----------3
ՀՈԿՏԵՄԲԵՐ ԱՄՍՎԱ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ԱՄՓՈՓԱԳԻՐ----------5
ԻՐԱՎՈՒՆՔԻ ԿՈՂՄ»ԻՀԿ ԻՐԱՎԱԿԱՆ ԱՄՓՈՓԱԳԻՐ ----------6
ԱՄՍԱԿԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ ----------7
ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԱՋԱԿՑՈՒԹՅՈՒՆ
ՏՐԱՆՍՍԵՔՍՈՒԱԼ ԱՆՁԱՆՑ ՀԱՄԱՐ ----------9
ԼԻԼԻԹ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆԸ «ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ԿԱԿԱՉ
2020» ՄՐՑԱՆԱԿԱԲԱՇԽՈՒԹՅԱՆ ԼԱՎԱԳՈՒՅՆ ԵՌՅԱԿՈՒՄ Է---------10
ՀԱՐՁԱԿՈՒՄ ՏՐԱՆՍԳԵՆԴԵՐ ԿՆՈՋ ՎՐԱ ----------12
ՏՐԱՆՍ ՃԱՄԲԱՐ 6 ----------13
ՀԱՐՑԱԶՐՈՒՅՑՆԵՐԻ ՇԱՐՔ ՏՐԱՆՍԳԵՆԴԵՐ ԱՆՁԱՆՑ ՀԵՏ ----------15
ՀԱՐՑԱԶՐՈՒՅՑՆԵՐԻ ՇԱՐՔ ՏՐԱՆՍԳԵՆԴԵՐ ԱՆՁԱՆՑ ՀԵՏ ----------18
ՀԱՐՑԱԶՐՈՒՅՑՆԵՐԻ ՇԱՐՔ ՏՐԱՆՍԳԵՆԴԵՐ ԱՆՁԱՆՑ ՀԵՏ ----------20
ՆՈՅԵՄԲԵՐԻՆ ՏԵՂԻ ՈՒՆԵՑԱԾ ՄԻՋԱՑԱՌՈՒՄՆԵՐԻ ՇԱՐՔ ----------22







ՀՈԿՏԵՄԲԵՐԻՆ ՏԵՂԻ ՈՒՆԵՑԱԾ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ՇԱՐՔ

Սույն թվականի հոկտեմբեր ամսին «Իրավունքի կողմ» իրավապաշտպան ՀԿ-ն իր Տրանս ԼԳԲԻՔ+ ապահով տարածքում իրականացրեց մի քանի միջոցառումներ, որոնք ուղղված էին ռազմական և համաճարակային պայմաններում Տրանսգենդեր ԼԳԲԻՔ+ և սեքս աշխատող անձանց կարիքներին, նրանց իրազեկվածության բարձրացմանը և կրթությանը, մյուս կողմից համայնքային անվտանգությանն ու ինքնապաշտպանությանը:

«Իրավունքի կողմ» ՀԿ-ն հոկտեմբերի 15-ին և 23-ին իրականացրեց իրավաբանական խորհրդատվություններ, որոնց ժամանակ կազմակերպության փաստաբանը տրամադրեց իրավաբանական խորհրդատվություն մի շարք սեքս աշխատող և Տրանսգենդեր ԼԳԲԻՔ+ անձանց: Խորհրդատվությունների ընթացքում փաստաբանի հետ քննարկվեցին այնպիսի թեմաներ, ինչպիսիք են անվանափոխության, սեռափոխության իրավական կարգավորումները ՀՀ-ում, տրանս անձանց նկատմամբ խտրականության դեպքերի փաստագրումը և լուծման ուղիները, և այլն:

Հոկտեմբերի 9-ին կազմակերպության Տրանս ԼԳԲԻՔ+ ապահով տարածքում ավելի քան 15 Տրանսգենդեր ԼԳԲԻՔ+ և սեքս աշխատող և համախոհ անձանց մասնակցությամբ իրականացվեց քննարկում «Ինքնապաշտպանություն և անվտանգություն» թեմայի շուրջ, որի ժամանակ կազմակերպության նախագահ Լիլիթ Մարտիրոսյանը խոսեց Տրանսգենդեր ԼԳԲԻՔ+ և սեքս աշխատող անձանց ուղղված ատելության կոչերի, ներքին և արտաքին անվտանգության մասին:

Ամսական միջոցառումների ժամանակացույց

01.10.2020թ - 31.10.2020թ

Միջոցառման անվանումը	Օրը	Ժամը
«Ինքնապաշտպանություն ու անվտանգություն» համայնքային հանդիպում	09.10.2020թ	15:00
Իրավաբանական խորհրդատվություն	15.10.2020թ	16:00
«Առաջին Բուժօգնություն» համայնքային հանդիպում	22.10.2020թ	15:00
Իրավաբանական խորհրդատվություն	23.10.2020թ	16:00
«Պատերազմի ազդեցությունը» համայնքային հանդիպում	29.10.2020թ	15:00

«Իրավունքի կողմ» ՀԿ-ն հոկտեմբերի 15-ին և 23-ին իրականացրեց իրավաբանական խորհրդատվություններ, որոնց ժամանակ կազմակերպության փաստաբանը տրամադրեց իրավաբանական խորհրդատվություն մի շարք սեքս աշխատող և Տրանսգենդեր ԼԳԲԻՔ+ անձանց:

Հոկտեմբերի 9-ին կազմակերպության Տրանս ԼԳԲԻՔ+ ապահով տարածքում ավելի քան 15 Տրանսգենդեր ԼԳԲԻՔ+ և սեքս աշխատող ու համախոհ անձանց մասնակցությամբ իրականացվեց քննարկում «Ինքնապաշտպանություն և անվտանգություն» թեմայի շուրջ, որի ժամանակ կազմակերպության նախագահ Լիլիթ Մարտիրոսյանը խոսեց Տրանսգենդեր ԼԳԲԻՔ+ և սեքս աշխատող անձանց ուղղված ատելության կոչերի, ներքին և արտաքին անվտանգության մասին:

Հոկտեմբերի 22-ին իրականացվեց «Առաջին բուժօգնություն» թեմայի վերաբերյալ հանդիպում, վարում էր կազմակերպության ադմինիստրատիվ և պլանավորման օգնական Հենրի Գալստյանը: Հենրին մասնակիցների հետ քննարկում ծավալեց կոտրվածքների, արհեստական շնչառության և շնչուղիների խցանման, սրտի աշխատանքի վերականգնման, սննդային թունավորումների, ինչպես նաև արտակարգ իրավիճակների և այրվածքների մասին:

Հոկտեմբեր ամսվա վերջին հանդիպման ընթացքում իրականացվեց ֆիլմի դիտում Տրանսգենդեր ԼԳԲԻՔ+ և սեքս աշխատող անձանց մասնակցությամբ: «Իրավունքի կողմ» իրավապաշտպան կազմակերպության Տրանս ԼԳԲԻՔ+ ապահով տարածքում մասնակիցները դիտեցին «Լոլա» ֆիլմը, որը պատմում է տրանսգենդեր կնոջ և իր կյանքի դժվարությունների մասին:

Հորդորեց սոցիալական մեդիա հարթակներում լինել առավելագույնս զգայուն, պահպանել էթիկայի և թվային անվտանգության կանոնները և զերծ մնալ ատելություն սերմանող ցանկացած գրառումներից: Լիլիթ Մարտիրոսյանն անդրադարձավ նաև Հայաստանում մարդու իրավունքների իրավիճակին: Մասնակիցներից յուրաքանչյուրը խոսեց իր փորձից և օրինակներ ներկայացրեց մեդիա ոլորտում իրեն հանդիպած ատելության կոչերի կամ խտրականություն պարունակող հրապարակումների մասին:

Հաջորդ հանդիպումը հոկտեմբերի 22-ին էր՝ «Առաջին բուժօգնություն» թեմայի շուրջ: Հանդիպումը վարում էր կազմակերպության ադմինիստրատիվ և պլանավորման օգնական Հենրի Գալստյանը, որը մասնակիցների հետ քննարկում ծավալեց կոտրվածքների, արհեստական շնչառության և շնչուղիների խցանման, սրտի աշխատանքի վերականգնման, սննդային թունավորումների, ինչպես նաև արտակարգ իրավիճակների և այրվածքների մասին: Հանդիպման ընթացքում վերոնշյալի մասին ներկայացվեց համապարփակ տեղեկատվություն և հոլովակներ, որոնք օգնեցին մասնակիցների շրջանում ամրապնդել առաջին բուժօգնության վերաբերյալ գիտելիքները:

Իսկ արդեն ամսվա վերջին հանդիպման ընթացքում իրականացվեց ֆիլմի դիտում Տրանսգենդեր ԼԳԲԻՔ + և սեքս աշխատող անձանց մասնակցությամբ: «Իրավունքի կողմ» իրավապաշտպան կազմակերպության Տրանս ԼԳԲԻՔ+ ապահով տարածքում մասնակիցները դիտեցին «Լոլա» ֆիլմը, որը պատմում է տրանսգենդեր կնոջ և իր կյանքի դժվարությունների մասին:

Հիշեցնենք, որ «Իրավունքի կողմ» իրավապաշտպան ՀԿ-ն ամեն երեքշաբթի և ուրբաթ օրերին՝ 15:00-ին, տրամադրում է իրավաբանական խորհրդատվություններ բոլոր Տրանս ԼԳԲԻՔ+ և սեքս աշխատող անձանց: Կազմակերպության համայնքային կենտրոնում իրականացվում են միջոցառումներ, որոնք ուղղված են համայնքի հզորացմանն ու հատկապես այս բարդ ժամանակահատվածում պատերազմի հետևանքների մեղմացմանը:

ՀՈԿՏԵՄԲԵՐ ԱՄՍՎԱ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ԱՄՓՈՓԱԳԻՐ



Visitors of the "Right Side" Human Rights Defender NGO during October 2020.

163

TRANS LGBIQ+ AND SEX WORKER COMMUNITY MEMBERS

RIGHT SIDE

“Իրավունքի կողմ” իրավապաշտպան ՀԿ-ն Տրանս ապահով տարածքում հոկտեմբեր ամսվա ընթացքում իրականացրել է թվով 9 միջոցառում.

«Առաջին բուժօգնություն» համայնքային հանդիպմանը մասնակցել է 17 Տրանս ԼԳԲԻՔ+ և սեքս աշխատող անձ:

«Ինքնապաշտպանություն և անվտանգություն» համայնքային հանդիպմանը թվով Տրանս ԼԳԲԻՔ+ և սեքս աշխատող անձ:

«Պատերազմի ազդեցությունը» համայնքայի հանդիպմանը թվով 21 անձ:

«ՄԻԱՎ/ՁԻԱՀ և սեռավարակներ» թեմայով երկու հանդիպումներին թվով 40 Տրանս ԼԳԲԻՔ+ և սեքս աշխատող անձ:

Ֆիլմի դիտումներին թվով 18, իսկ իրավաբանական խորհրդատվություն ստացել է թվով 75 Տրանս ԼԳԲԻՔ+ և սեքս աշխատող անձինք:

«Իրավունքի կողմ» իրավապաշտպան ՀԿ-ն հոկտեմբեր ամսվա ընթացքում ընդունել է թվով 163 անձի, որոնք օգտվել են կազմակերպության կողմից իրականացվող իրավաբանական, կրթական և տեղեկատվական, սոցիալական ծրագրերի շրջանակներում տրամադրվող ծառայություններից:

Կազմակերպությունը կարևորում է յուրաքանչյուր Տրանս ԼԳԲԻՔ+ և սեքս աշխատող անձանց անվտանգությունը և բարօրությունը, տարածք տրամադրելով կրթվելու, վերապատրաստվելու, ինքնազարգացվելու և սոցիալականացվելու:

Մեր ամսական ամփոփագրերին կարող եք ծանոթանալ մեր պաշտոնական կայքէջում և սոցիալական մեդիայում:

1.Մարդու իրավունքների եվրոպական դատարան (ՄԻԵԴ)	Լ.Մարտիրոսյանն ընդդեմ Հայաստանի Հանրապետության (Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիա, հոդված 3,6,8,13)
2.Քաղաքացիական գործեր	- Լ.Մարտիրոսյանն ընդդեմ Իրատեսի՝ վիրավորանքի համար ներողություն խնդրելու և փոխհատուցում տրամադրելու պահանջների մասին վճռաբեկ փուլ - Ա.Գ.-ն ընդդեմ Հրապարակ օրաթերթի՝ զրպարտություն համարվող տվյալները հերքելու և փոխհատուցում տրամադրելու պահանջների մասին վերաքննության փուլ - Մ. Ս.-ն, Ն. Ա.-ն և Մ.Ե.-ն ընդդեմ Մալի սպորտային ակումբի՝ խտրականության հիմքով իրավունքների խախտումը ճանաչելու պահանջի մասին առաջին ատյան - Ա.Ք.-ն ընդդեմ Ա.Կ.-ի՝ գումարի բռնագանձման պահանջի մասին առաջին ատյան - Կ.Ս.-ն ընդդեմ Ա.Կ.-ի՝ գումարի բռնագանձման պահանջի մասին առաջին ատյան - Ա.Ա.-ն ընդդեմ Իսկանդեր ՍՊԸ-ի՝ աշխատանքային հարաբերությունները ծագած ճանաչելու և գումարի բռնագանձման պահանջների մասին առաջին ատյան
3.Քրեական գործեր՝ դատական փուլում	- Գ.Թ. -ն ենթարկվել է ծեծի, նրան պատճառվել է նյութական և մարմնական վնաս, հարուցվել է քրեական գործ ՀՀ քրեական օրենսգրքի 118, 185 հոդվածներով, ճանաչվել է տուժող
4.Քրեական գործեր՝ նախնական քննության փուլում՝ բողոքարկված դատարան	- Ա.Ք-ն ընդդեմ Արաբկիրի ոստիկանության, քրեական գործ հարուցելը մերժելու դեմ, հոդված 179 դատաքննության փուլ - Ա.Ք.-ն ընդդեմ Արաբկիրի ոստիկանության, նոր երևան եկած հանգամանքների ուժով քրեական գործի նորոգումը մերժելու դեմ, հոդված 179 դատաքննության փուլ - «Իրավունքի կողմ» ԻՀԿ ընդդեմ Կենտրոնի ոստիկանության (Ն.Մալյանի հայտնած անձնական բժշկական տեղեկությունների հրապարակման վերաբերյալ) դատաքննության փուլ - Ա.Ք.-ն ընդդեմ ՀՀ ՊԵԿ, հարկերի վճարումից խուսափելու համար քրեական գործ հարուցելը մերժելու դեմ դատաքննության փուլ - Կ.Ս.-ն ընդդեմ Արաբկիրի ոստիկանության, քրեական գործը հարուցելը մերժելու դեմ, ՀՀ քրեական օրենսգիրք, հոդված 179 դատաքննության փուլ
5.Վարչական գործեր	- Մ.Օ.-ն ընդդեմ ՀՀ ոստիկանության, վարչական ակտն անվավեր ճանաչելու պահանջի մասին (արտակարգ դրության պայմաններում սահմափակումները խախտելու դեպքով) առաջին ատյան - Կ.Ա.-ն ընդդեմ ՀՀ ԱՆ ՔԿԱԳ՝ ծննդյան ակտում սեռի վերաբերյալ գրառումը փոխել, իգականը ուղղել արական գրառումով, ընդունելուն պարտավորեցնելու և պատասխանողի 17.12.2018թ. եզրակացությունը վերացնելու պահանջների մասին վերաքննության փուլ

Հարգելի՛ Ցրանս ԼԳԲԻՔ համայնք, մեր իրավաբանական ծառայություններից օգտվելու համար կարող եք զանգահարել+37493500339 հեռախոսահամարով, որը գործում է 24/7 ռեժիմով:

ԱՄՍԱԿԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

01.11.2020թ - 30.11.2020թ

Event Name	Day	Time
Իրավաբանական խորհրդատվություն	03.11.2020	15:00
«Պատերազմի ազդեցությունը» համայնքային հանդիպում	04.11.2020	15:00
«ՄԻԱՎ/ՁԻԱՀ և սեռավարակներ» օնլայն հանդիպում	05.11.2020	15:00
Իրավաբանական խորհրդատվություն	06.11.2020	15:00
Ֆիլմի դիտում և քննարկում	06.11.2020	16:00
Իրավաբանական խորհրդատվություն	10.11.2020	15:00
«Եթե ես լուսանկարիչ լինեի» համայնքային հանդիպում	11.11.2020	15:00
Իրավաբանական խորհրդատվություն	17.11.2020	15:00
«Իմ մասնագիտության կարևորությունը»	18.11.2020	15:00
Իրավաբանական խորհրդատվություն	20.11.2020	15:00
Ֆիլմի դիտում և քննարկում	20.11.2020	16:00
Իրավաբանական խորհրդատվություն	24.11.2020	15:00
«ՄԻԱՎ/ՁԻԱՀ և սեռավարակներ» օնլայն հանդիպում	25.11.2020	15:00
«Իմ կյանքը 10 տարի անց» օնլայն հանդիպում	26.11.2020	15:00
Իրավաբանական խորհրդատվություն	27.11.2020	15:00
Ֆիլմի դիտում և քննարկում	27.11.2020	16:00

«Իրավունքի կողմ» ՀԿ-ն իրազեկել է Տրանս ԼԳԲԻՔ+ և սեքս աշխատող համայնքին մարդու իրավունքների վերաբերյալ՝ իրականացնելով 2 իրավաբանական խորհրդատվություն,: Իրազեկումը շարունակվել է նաև նոյեմբերին կայացած «Տրանս Ճամբար 6» արտազնա դասընթացի ընթացքում: Իրավական կրթությանը և խորհրդատվություններին ներգրավվել են ավելի քան 58 Տրանս ԼԳԲԻՔ+ և սեքս աշխատող անձինք, համախոհներ:

Կազմակերպության Տրանս համայնքային կենտրոնում իրականացվել են 2 ֆիլմի դիտում և քննարկում՝ ակտիվիզմի և տրանս անձանց կյանքի պատմությունների մասին: Դիտումներն իրականացվել են նոյմբերի 6-ին և 25-ին: Ֆիլմի դիտումներին ընդհանուր առմամբ մասնակցել են 25 Տրանս ԼԳԲԻՔ+ և սեքս աշխատող անձինք:

Շարունակելով կրթական և տեղեկատվական դասընթացները ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի և սեռավարակների վերաբերյալ՝ կազմակերպությունը նոյմբերի հինգին, տասնյոթին և քսանչորսին իրականացրել է հանդիպումներ, որոնց ժամանակ կազմակեևպության նախագահ Լիլիթ Մարտիրոսյանը Տրանս ԼԳԲԻՔ+ և սեքս աշխատող անձանց իրազեկել է սեռավարակների վերաբերյալ: Խոսվել է սեռավարակների ախտորոշման, հետազոտությունների և դրանց կանխարգելման մասին, ինչպես նաև ներկայացվել է, թե ԻԿՀԿ-ն ինչ ծառայություններ է մատուցում ՄԻԱՎ-ի կանխարգելման համար:

Նոյեմբերի 4-ին իրականացվել է «Պատերազմի ազդեցությունը 2» համայնքային հանդիպումը, որն ըստ էության շարունակությունն էր նախորդ ամիս իրականացված նույնանուն հանդիպման՝ հաշվի առնելով համայնքում կարիքն ու հետաքրքրվածությունը թեմայի շուրջ: Հանդիպմանը մասնակցում էին ավելի քան 16 Տրանս ԼԳԲԻՔ+ և սեքս աշխատող անձինք:

Նոյեմբերի 11-ին ազատ ձևաչափով իրականացված «Եթե ես լուսանկարիչ լինեի» խորագրի ներքո միջոցառման ընթացքում Տրանս ԼԳԲԻՔ+ և սեքս աշխատող անձինք խոսել են լուսանկարչության մասին, քննարկել լուսանկարչության պատմությունը և դիտել մի քանի հոլովակներ: Հանդիպումը մոդերացնում էր կազմակերպության համայնքի պատասխանատու Արտակ Աղամը: Իսկ նոյմբերի 18-ին իրականացված «Իմ մասնագիտության կարևորությունը» խորագրի ներքո հանդիպումն ակտիվ քննարկումների առիթ դարձավ մասնակիցների համար, քանի որ բոլորը փորձում էին իրենց տեղը գտնել հայաստանյան աշխատաշուկայում: Երկու հանդիպումների ընթացքում ներկա են եղել 26 Տրանս ԼԳԲԻՔ+ և սեքս աշխատող անձինք:

Նոյեմբեր ամսվա համայնքային վերջին հանդիպումը կրում էր «Ակտիվիզմի հեռանկարները Հայաստանում» խորագիրը, որն իրականացվել է նոյեմբերի 26-ին: «Հանդիպմանը մասնակցում էին 11 Տրանս ԼԳԲԻՔ+ և սեքս աշխատող ակտիվիստներ:

ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԱՋԱԿՑՈՒԹՅՈՒՆ ՏՐԱՆՍՍԵՔՍՈՒԱԼ ԱՆՁԱՆՑ ՀԱՄԱՐ

«Իրավունքի կողմ» իրավապաշտպան ՀԿ-ն, կարևորելով յուրաքանչյուր տրանսսեքսուալ անձի առողջությունը, սկսում է սոցիալական աջակցության ծրագիր, որի շրջանակներում տրանսսեքսուալ անձանց տրամադրում է էնդոկրինոլոգի հետ խորհրդատվության հնարավորություն, հորմոնալ դեղորայք, համապատասխան կլինիկական հետազոտություններ, հոգեբանական աջակցություն և այլն:

«Իրավունքի կողմ» իրավապաշտպան ՀԿ-ն՝ հանդիսանալով միջոնրդ, կազմակերպում է տրանսսեքսուալ անձի և էնդոկրինոլոգի օնլայն հանդիպումը, այնուհետև էնդոկրինոլոգի համապատասխան ցուցումներից հետո կազմակերպությունը տրանսսեքսուալ անձին ուղղորդում է կլինիկական հետազոտության: Այնուհետև, պատասխանները ստանալուն պես ուղարկվում է էնդոկլինոլոգին, որից հետո նշանակվում է համապատասխան հորմոնալ դեղորայք, որը կազմակերպությունը գնում է և տրամադրում տրանսսեքսուալ անձին և պարբերաբար վերահսկվում է բժշկի և կազմակերպության համապատասխան աշխատակցի կողմից:

«Իրավունքի կողմ» իրավապաշտպան ՀԿ-ն իր հիմնադրման օրվանից բարձրաձայնում է տրանսգենդեր անձանց առողջության իրավունքին առնչվող մի շարք խնդիրներ, ինչպիսիք են սեռափոխության և հորմոնաթերապիայի իրավական բացերը:

Այսպիսով, աջակցության նպատակն է կանխել տրանսսեքսուալ անձանց շրջանում սխալ դեղերի օգտագործումը, ստեղծել հորմոնաթերապիայի հասանելի ծառայություններ, իրազեկել հորմոնաթերապիայի և սեռափոխության գործընթացի մասին և ուղղորդել բոլոր անհրաժեշտ մասնագետների մոտ:

Սույն ծրագիրն իրականացվում է «Իրավունքի կողմ» իրավապաշտպան ՀԿ-ի կողմից, Արևելյան գործընկերության երկրների՝ «Եվրոպական միության COVID-19 հետևանքների չեզոքացման աջակցության ծրագրի» շրջանակներում Եվրոպական միության, «Մարդը կարիքի մեջ» կազմակերպության, Նիդեռլանդների Հելսինկյան կոմիտեի, AFEW ինթերնեյշնլի ֆինանսական



ԵՄ COVID-19 հետևանքների չեզոքացման աջակցության ծրագիր
Արևելյան գործընկերության երկրների համար
Միասին հաղթահարենք

RIGHT SIDE
HUMAN RIGHTS DEFENDER NGO

ԼԻԼԻԹ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆԸ «ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ԿԱԿԱՉ 2020» ՄՐՑԱՆԱԿԱԲԱՇԽՈՒԹՅԱՆ ԼԱՎԱԳՈՒՅՆ ԵՌՅԱԿՈՒՄ Է

«Իրավունքի կողմ» իրավապաշտպան հասարակական կազմակերպությունը պատիվ ունի հայտնել, որ կազմակերպության հիմնադիր-նախագահ Լիլիթ Մարտիրոսյանը նոմինացվել է «Մարդու իրավունքների կակաչ 2020» մրցանակաբաշխության համար: «Մարդու իրացվունքների կակաչ»-ը Նեդեռլանդների կառավարության կողմից հիմնադրած ամենամյա մրցանակաբաշխություն է՝ ուղղված աշխարհում մարդու իրավունքները խաղաղ և նորարարական կերպով տարածող և մարդու իրավունքների ու հավասարության համար պայքարող անհատներին և կազմակերպություններին:

Մեծ ոգևորությամբ տեղեկացնում ենք, որ 2020 թվականի մարտին և հունիսին կայացած թեկնածուների առաջադրման երկու փուլերից հետո թեկնածուների ընդհանուր քանակից ամբողջ աշխարհից ընտրվեցին 100-ը՝ 47 անհատ (26 կին և 21 տղամարդ) և 53 կազմակերպություն: Ավելին՝ խորհրդակցությունների մի քանի փուլից հետո մարդու իրավունքների փորձագետներից կազմված անկախ ժյուրին նոմինացված 100 թեկնածուներից առանձնացրեց լավագույն 13-ին, ապա 3-ին: Հպարտությամբ ենք նշում, որ լավագույն 3 թեկնածուներից մեկն էլ Լիլիթ Մարտիրոսյանն է:

Նիդեռլանդների արտաքին գործերի նախարարությունը դեկտեմբերի 10-ին՝ մարդու իրավունքների միջազգային օրվան ընդառաջ, «Մարդու իրավունքների կակաչ 2020» մրցանակաբաշխության արարողության ժամանակ կընտրի հաղթող թեկնածուին:

Սա մեծ պատիվ է մեզ համար, քանի որ կազմակերպության նախագահ Լիլիթ Մարտիրոսյանը խիզախորեն պատասխանատվություն է վերցրել իր վրա խոսելու տրանսգենդեր անձանց իրավունքներից: Նա բազմիցս է բարձրաձայնել ժողովրդավար Հայաստանի մասին, որտեղ հարգված կլինեն բազմազանությունն ու բազմակարծությունը, մարդու իրավունքներն ու հավասարությունը: Լիլիթ Մարտիրոսյանը, հիմք դնելով Հայաստանում տրանս անձանց բարօրության ու բարեկեցության համար պայքարին, շատ անգամներ բարձրաձայնել է տրանս անձանց իրավունքների, հավասարության, բարօրության մասին: Նա լավագույն օրինակ է, ով պայքարում է տրանս անձանց իրավահավասարության համար և իրավախախտումների դեմ: Սա Հայաստանում մարդու իրավունքների պաշտպանությանն ուղղված Լիլիթի լավագույն ձեռքբերումներից մեկն է և նոր քայլ՝ հավասարությանը հասնելու ճանապարհին:

Lilit Martirosyan is one of the top 3 candidates of "Human Rights Tulip 2020"

HUMAN RIGHTS TULIP 2020

RIGHT SIDE

Ինչպես Լիլիթն է նշում՝ «Ես գիտեմ, թե ինչի համար եմ ծնվել, գիտեմ ինչու եմ այստեղ և ինչու է ճանապարհս այդքան փշոտ: Իմ հիմնական նպատակն է ոգեշնչել տրանսգենդեր անձանց ու փարատել իմ համայնքի ցավը: Ես առանց խիզախության, գթասրտության և հույսի երբեք չէի կարողանա պայքարել տրանս անձանց իրավահավասարության համար: Բոլորս այս աշխարհում մի առաքելություն ունենք, իսկ իմ առաքելությունն է օգնել մարդկանց, հասնել տրանսգենդեր անձանց արժանապատիվ և բարեկեցիկ կյանքի կերտմանը, աջակցել տրանս անձանց պայքարելու իրենց նկատմամբ բռնությունների դեմ»:

Սա մեծ պատիվ է «Իրավունքի կողմ» իրավապաշտպան հասարակական կազմակերպության ողջ թիմի և տրանսգենդեր համայնքի համար, քանի որ միջազգային հարթակներում ևս մեկ անգամ բարձրաձայնվում է Հայաստանում տրանս անձնանց իրավունքների և հավասարության համար Լիլիթ Մարտիրոսյանի պայքարի մասին: Մենք մեծ հույս ունենք, որ ապագայում ունենալու ենք հզոր տրանս համայնք, որն առանց խոչընդոտների ազատորեն կարողանալու է խոսել տրանս, ինչպես նաև ԼԳԲԻՔ+ և սեքս աշխատող անձանց իրավունքների ու բարեկեցության մասին:

Lilit Martirosyan is one of the top 3 candidates of

“Human Rights Tulip 2020”

HUMAN RIGHTS TULIP

2020

ՀԱՐՁԱԿՈՒՄ ՏՐԱՆՍԳԵՆԴԵՐ ԿՆՈՋ ՎՐԱ

2020թ. հոկտեմբերի 30-ին «Իրավունքի կողմ» իրավապաշտպան ՀԿ էր դիմել Երևանում բնակվող տրանսգենդեր կին Գոգան, իր գենդերային ինքնության հիմքով նույն օրը գիշերը ծեծի ենթարկվելու կապակցությամբ: Կազմակերպությունը դեպքի առթիվ տրանսգենդեր կնոջը տրամադրեց իրավաբանական խորհրդատվություն:

Հոկտեմբերի 30-ի առավոտյան կազմակերպություն է այցելում Տրանսգենդեր Գոգան, և տեղեկացնում, որ նույն օրը, գիշերը ժամը 3-ի շրջակայքում, տուն վերադառնալիս ենթարկվել է հարձակման մոտ 40 տարեկան տղամարդու կողմից, որն էլ իրեն ծեծի է ենթարկել:

«Նա մեքենայով մոտեցավ ինձ, հարցերց, արդյոք անվճար կհամաձայնվեմ իր հետ սեռական հարաբերություն ունենալ, ի պատասխան նրան մերժեցի ու պահանջեցի հեռանալ, արագացնելով քայլերս: Սակայն տղամարդը համառեց, և հարձակվեց ինձ վրա: Նա առաջինը հարվածեց գլխիս, որից հետո գլխապտույտ սկսվեց ինձ մոտ և ես չկարողացա կողմնորոշվել, թե ինչ պետք է անել այդ պահին: Ապա մի քանի անգամ գլխիս հարվածելուց հետո, ինձ հրեց, ես ընկա, մոտեցավ ու սկսեց ոտքով հարվածել թե՛ գլխիս, թե՛ մեջքիս» – կազմակերպությանը պատմեց Տրանսգենդեր կին Գոգան:

Նշենք, որ ծեծի արդյունքում տրանսգենդեր կնոջ մոտ մի քանի օր շարունակ մարմնի տարբեր հատվածներում ցավեր են եղել, շարունակական գլխացավեր և գլխապտույտներ, վնասվել է կնոջ քիթը: Տրանսգենդեր կինը գտնվում է սթրեսային վիճակում և կրել է հոգեբանական ծանր տրավմաներ, իսկ հիմա Գոգան միայնակ դուրս չի գալիս տանից:

Տրանսգենդեր Գոգան այս պահին ապահով տարածքում է, իսկ «Իրավունքի կողմ» ՀԿ-ն սոցիալական և իրավաբանական աջակցության ծրագրերի շրջանակներում կտրամադրի աջակցություն տրանսգենդեր կնոջը:

«Իրավունքի կողմ» իրավապաշտպան ՀԿ-ն հետամուտ է լինելու հասնել արդարատադության այս կապակցությամբ: Այս և այլ գործերի մանրամասներին ծանոթանալու համար հետևեք սոցիալական ցանցերի մեր պաշտոնական էջերին և կայքի տեղեկատվությանը:

ՏՐԱՆՍ ՃԱՄԲԱՐ 6

«Իրավունքի կողմ» իրավապաշտպան հասարակական կազմակերպությունը 2020 թվականի նոյեմբերի 13-15-ը իրականացրեց «Բոլորս շարունակելու ենք պայքարել, մինչև ապահով լինենք» խորագրի ներքո հերթական Տրանս ճամբարը, որը թվով 6-րդն էր: Ճամբարը կազմակերպված էր Տրանս անձանց և Տրանս ակտիվիստների, նրանց ընտանիքի անդամների, Տրանս համակիրների համար:

Ճամբարի ընթացքում քննարկվեցին մի շարք թեմաներ, ինչպես օրինակ՝ տրանս անձանց իրավունքները ոստիկանությունում, սոցիալական մեդիայում, խարանն ու խտրականությունը, Տրանս անձանց իրավիճակը Հայաստանում, ատելության հիմքով բռնություններն ու ատելության կոչերը, սեռական և վերարտադրողական առողջության իրավունքը, ընտանիքի անդամների շահերի պաշտպանության մեխանիզմները, ապահովության և անվտանգության հարցերը:

Դասընթացի նպատակն էր խթանել Տրանսգենդեր անձանց կարողությունների զարգացումը և հզորացումը, բարելավել Տրանսգենդեր անձանց ներգրավվածության մակարդակը սոցիալ-մշակութային և քաղաքացիական կյանքում, ապահովել նրանց անվտանգությունը ինչպես ընտանիքում, այնպես էլ հասարակությունում: Բացի այդ, ճամբարը նպատակաուղղված էր նպաստել Տրանսգենդեր անձանց իրազեկվածության մակարդակի բարձրացմանը, կրթել նրանց և կրում էր ուսուցողական բնույթ:

Ճամբարի առաջին օրը բացման խոսքով հանդես եկավ «Իրավունքի կողմ» իրավապաշտպան հասարակական կազմակերպության նախագահ Լիլիթ Մարտիրոսյանը: Նա ողջունեց բոլոր մասնակիցներին, իր երախտագիտության խոսքն ուղղեց նրանց՝ ճամբարում մասնակցություն ունենալու համար, վստահեցրեց, որ սա կլինի նրանց լավագույն դասընթացներից մեկը, բոլորը կստանան նոր գիտելիքներ և կանցկացնեն հիանալի ժամանակ: Այնուհետև մասնակիցները ծանոթացան միմյանց հետ, որին էլ հաջորդեց եռօրյա ճամբարի ողջ ընթացքի համար կանոնների սահմանումը:

Առաջին օրվա դասընթացները հորմոնաթերապիայի և սեռափոխության վերաբերյալ էին: Հորմոնաթերապիայի մասին դասընթացը վարում էր Լ. Մարտիրոսյանը, որը մանրամասնորեն ներկայացրեց հորմոնաթերապիայի էությունը, դրա անհրաժեշտությունը սեռափոխության վիրահատություն իրականացնելիս, հորմոնաթերապիա անցնելու ռիսկերը և խնդիրները: Նա մանրամասն ներկայացրեց հորմոններն ու այն դեղամիջոցները, որոնք անհրաժեշտ են հորմոնաթերապիայի ողջ ընթացքում:

Դասընթացը շարունակվեց սեռի ու սեռականության վերաբերյալ քննարկմամբ, որի ժամանակ փորձագետի կողմից ներկայացվեց, թե ինչ է սեռը, ինչպես նաև խոսեց սեռական կողմնորոշվածության, գենդերային ինքնության և այլ հարակից թեմաների մասին: Մասնակիցներն ակտիվ քննարկում ծավալեցին, քանի որ թեմաները բավականին հետաքրքիր էին: Ակտիվ քննարկման մեջ էին հատկապես Տրանս ԼԳԲԻՔ+ և սեքս աշխատող անձանց ծնողները, որոնց համար չափազանց կարևոր էր սեռական կողմնորոշվածության մասին նոր տեղեկատվություն ձեռք բերելը:

Օրվա ավարտին մասնակիցները բաժանվելով խմբերի գնահատեցին օրը՝ ներկայացնելով իրենց պահանջները, բողոքները, առաջարկությունները, իրենց համար առավել հետաքրքիր թեմաները, ինչպես նաև հաճելի պահերը և շնորհակալություն հայտնեցին համախմբման ու ճամբարի առաջին օրն իրականություն դարձնելու համար:

Օրն ավարտվեց «Լոլա» ֆիլմի դիտմամբ և քննարկմամբ: Ֆիլմը պատմում է Տրանսգենդեր կին Լոլայի ու նրա կյանքի դժվարությունների մասին:

Դասընթացի երկրորդ օրը սկսվեց նախորդ օրվա ամփոփմամբ, ապա Տրանս ԼԳԲԻՔ+ և սեքս աշխատող անձանց ու նրանց ծնողների ընտանեկան պատմությունների ներկայացմամբ: Ծնողները խոսեցին իրենց երեխաների հետ ունեցած հարաբերություններից, ներկայացրին այն դժվարությունները, որոնք ունեցել են ծնող-երեխա հարաբերություններում: Այնուհետև խոսեց համայնքը՝ կրկին անդրադառնալով իրենց դժվարություններին, ծնողների հետ ունեցած կոնֆլիկտներին և դրանց հաղթահարմանը: Պատմությունների ներկայացումից հետո մասնակիցներն իրենց հետաքրքրող հարցերն ուղղեցին ծնողներին այն մասին, թե ինչպիսի մոտեցումներ կարող են ունենալ, որպեսզի լուծեն այնպիսի խնդիրներ, ինչպիսիք են հոմոֆոբիան և տրանսֆոբիան ընտանիքում, բարձրացնեն ընտանիքի անդամների իրազեկվածության մակարդակը և այլն:

«Խոսում ենք մենք և մեր ծնողները. ընտանեկան պատմություններ» հանդիպմանը հաջորդեց «Խարան և խտրականություն» թեմայի շուրջ քննարկումը: Դասընթացավարը բացատրեց, թե ինչ են խարանն ու խտրականությունը, ապա ներկայացրեց Տրանսգենդեր անձանց նկատմամբ դրսևորվող խարանի և խտրկանության դեպքերը Հայաստանում և այն ոլորտները, որտեղ Տրանսգենդեր անձինք ավելի շատ են խտրականացվում: Փորձագետը ներկայացրեց նաև ընտանիքում խտրական դրսևորումները, որոնք ուղղորդվում են բռնության տարբեր տեսակներով՝ կապված սեռական կողմնորոշվածության ու գենդերային ինքնության հետ:

Օրվա երկրորդ հատվածում «Իրավունքի կողմ» իրավապաշտպան հասարակական կազմակերպության փաստաբան Արթուր Մարգարյանը վարեց «Մեր իրավունքները սոցիալական մեդիայում և ոստիկանությունում» թեմաների վերաբերյալ դասընթաց: Փորձագետը պատմեց ոստիկանությունում Տրանս անձանց իրավունքների ու պարտականությունների մասին, ապա ներկայացրեց, թե ոստիկանության աշխատակիցներն ինչպիսի զգայուն մոտեցում պետք է ունենան Տրանսգենդեր անձանց նկատմամբ: Իսկ հետո ներկայացրեց, թե ոստիկական կանչի և այլ դեպքերի ժամանակ բերման ենթարկվելիս քաղաքացիներն ինչ իրավունքներ ունեն: Դասընթացի երկրորդ մասում փաստաբանն անդրադարձավ օնլայն հարթակում և սոցիալական մեդիայում մարդու իրավունքներին ու ազատություններին: Ա. Մարգարյանը ներկայացրեց ատելության կոչերի բնույթը, ատելություն քարոզելը, օնլայն հարթակում վիրավորանքների ու սպառնալիքների դրսևորումները, տվյալ դեպքերում իրավունքների պաշտպանության մեխանիզմները: Փաստաբանը դասընթացի ավարտին վարեց գիտելիքներն ամրապնդող խաղ և պատասխանեց մասնակիցների հարցերին:

Օրվա ավարտին կրկին իրականացվեց օրվա գնահատում, որի ընթացքում մասնակիցները, կարևորեցին ծնողների ներգրավվածությունը ճամբարին և նրանց պատրաստակամությունը Տրանս ԼԳԲԻՔ+ և սեքս աշխատող անձանց օգնելու և աջակցելու հարցում:

Ինչպես նախորդ երկու օրերի ընթացքում, երրորդ օրն էլ սկսվեց նախորդ օրվա ամփոփմամբ: Մասնակիցները, երկու խմբի բաժանվելով, ներկայացրին նախորդ օրվա ընթացքում ստացած գիտելիքներն ու տեղեկատվությունը:

Օրվա առաջին մասում՝ պանելային քննարկման ընթացքում 8 սեքս աշխատողներ պատմեցին իրենց՝ որպես Տրանսգենդեր և սեքս աշխատող անձանց նկատմամբ տեղի ունեցած բազում բռնությունների, խարանի ու խտրականության մասին, և թե ինչպես են կարողացել պաշտպանվել ու գոյատևել կյանքի դժվար պայմաններում, թե ինչ խոչընդոտների են հանդիպել ընտանիքում, փողոցում և առհասարակ կյանքի բոլոր ոլորտներում: Ինչպես նաև անդրադարձան Հայաստանի Հանրապետությունում սեքս աշխատանքով զբաղվելու բարդություններին, խնդիրներին, վտանգներին: Տրանսգենդեր սեքս աշխատող անձինք նաև պատասխանեցին մասնակիցների հարցերին, որոնք ի պատասխան իրենց պատրաստակամությունը հայտնեցին կանգնելու Տրանսգենդեր սեքս աշխատող անձանց կողքին, նրանց իրավունքների ու ազատությունների պաշտպանության համար:

Օրվա երկրորդ կեսին իրականացվեց ճամբարի ամփոփում և ճամբարի մասնակիցների վկայականների հանձնում: Ինչպես նաև ընտրվեցին կամավորներ, որոնք ստացան խրախուսական նվերներ՝ ճամբարի լավագույնս իրականացմանն օգնելու համար:

Ամփոփելով ճամբարում անցկացրած երեք օրերը՝ «Իրավունքի կողմ» իրավապաշտպան հասարակական կազմակերպության նախագահը շնորհակալություն հայտնեց մասնակիցներին, դասընթացը ֆինանսավորող կազմակերպությանը, դասընթացավարներին, ԻԿՀԿ ողջ անձնակազմին և նշեց, որ ճամբարները շարունակական բնույթ են կրելու, քանի որ դրանք չափազանց կարևոր են Տրանսգենդեր անձանց իրավունքների ու ազատությունների պաշտպանության համար: Նա նաև նշեց, որ ճամբարները լավագույն հարթակներ են մեզ համար, որտեղ մենք համախմբվում ենք, քննարկում մեր կարիքները և խնդիրները՝ դրանց լուծման արդյունավետ ուղիներ փնտրելով:

«Մենք շարունակելու ենք համախմբել Տրանսգենդեր անձանց և նպաստել Տրանս անձանց իրազեկվածության մակարդակի բարձրացմանը հանուն նրանց բարեկեցության ու բարօրության, հանուն նրանց իրավունքների պաշտպանության» - նշեց Լ. Մարտիրոսյանը:

ՀԱՐՑԱԶՐՈՒՅՑՆԵՐԻ ՇԱՐՔ ՏՐԱՆՍԳԵՆԴԵՐ ԱՆՁԱՆՑ ՀԵՏ

«Իրավունքի կողմ» իրավապաշտպան հասարակական կազմակերպությունը Տրանսգենդեր անձանց հիշատակի միջազգային օրվան՝ նոյեմբերի 20-ին ընդառաջ իրականացնում է հարցազրույցների շարք Տրանսգենդեր անձանց հետ:

Այս հոդվածում ներկայացնում ենք Տրանսգենդեր սեքս աշխատող Մագդալենայի պատմությունը: Մագդալենան, չցանկանալով բարձրաձայնել իր իրական անունը, նշում է, որ իր նկատմամբ բռնություններ շատ են եղել: Հիմա կարողանում է քիչ թե շատ ինքնապաշտպանվել, բայց նախկինում գրեթե ամեն օր հանդիպում էր բռնությունների:

Հարցին, թե երբևէ բռնություններ եղել են իր նկատմամաբ, Մագդալենան պատասխանում է.

-Բռնություններ շատ են եղել: Կարելի է ասել, կյանքս անցել է բռնություններով: Վերջին դեպքը եղել է տանը, որտեղ ապրում եմ ընկերուհուս հետ: Երկուսս էլ սեքս աշխատանքով ենք զբաղվում, քանի որ ուսանող ենք, մյուս կողմից այլ վայրում աշխատանք չեմ կարողանում դեռ գտնել: Ընկերուհիս սպասում էր իր հաճախորդին, որը երբ եկավ, խնդրեց իրեն ջուր տալ: Ընկերուհիս գնաց ջուր բերելու: Հաճախորդի՝ ինձ հետ կոպիտ խոսելու արդյունքում, ես էլ սկսեցի կոպիտ խոսել: Բանը հասավ նրան, որ հարձակվեց մեզ վրա և սկսեց հարվածել: Բարեբախտաբար կարող էի ինքնապաշտպանվել, նաև փորձում էի պաշտպանել ընկերուհուս: Արդյունքում վնասել եմ հեռախոսս, համակարգիչս: Կոտրվել է տան աթոռներից մեկը, չհաշված մարմնական վնասները, որոնք ունենք ես ու ընկերուհիս այս պահին: Հաճախորդն այնքան էր ագրեսիվացել, որ, շատ լկտի ձևով բղավելով, սեռական բնույթի հայհոյանքներ էր հնչեցնում: Այս ամենը կատարվում էր գիշերը: Կարևորն այն է, որ այս ամենին զուգահեռ, անընդհատ պահանջում էր, որ իմ իրական անունն ասեմ իրեն: Այս տեսակ բռնություններ հաճախ են լինում:

Trans awareness week

TDoR 2020

Առհասարակ, ու՞մ կողմից են հիմնականում բռնություններ լինում Ձեր նկատմամբ:

-Իմ նկատմամբ բռնություններ առավել հաճախ լինում են հաճախորդների կողմից: Դեռ ավելին, քանի որ նաև սովորում եմ համալսարանում, հաճախ եմ բախվում ինձ ուղղված վատ արտահայտությունների: Բարեկամներիս շրջանում էլ հաճախ վիրավորական արտահայտություններ են լինում իմ նկատմամաբ: Լավ հիշում եմ, երբ մորեղբորս տղան իմացել էր իմ ՍԿԳԻ մասին, իր երկու ընկերների հետ եկել էր ինձ ծեծի ենթարկելու: Իսկ նախկին աշխատանքի վայրից ինձ հեռացրին միայն նրա համար, որ կրկին իմացան իմ ինքնության մասին: Հեռացման պատճառը հետևյալն էր. «Դու այն մարդը չես, որ աշխատես մեզ մոտ»: Նման և այլ բռնությունները շատ վատ ազդեցություն են ունենում մարդկանց վրա: Ես բազմիցս ենթարկվել եմ սթրեսների, վախերս են շատացել և այլն: Կարելի է ասել ենթարկվել եմ բոլոր տեսակ բռնությունների, թե՛ հոգեբանական, թե՛ ֆիզիկական, թե՛ տնտեսական: Երբ մորս ընկերուհին մեզ հետ էր ապրում, իմ մասին իմանալուց հետո սկսեց արգելել ինձ դուրս գալ տանից, վերցրեց հեռախոսս, փոխեց ինտերնետ կապի գաղտնաբառը, նույնիսկ գումար չէին տալիս ինձ: Մայրս առավոտից երեկո աշխատում էր, իսկ երբ վերադառնում էր տուն, ընկերուհին ասում էր, թե «ճիշտ ուղու վրա է ինձ դնում»:

Trans awareness week

TDoR 2020

Ինչպե՞ս եք հաղթահարել Ձեր նկատմամաբ բռնության հետևանքները:

– Բռնության հետևանքները կարողացա հաղթահարել առաջին հերթին իմ իրավունքների մասին իրազեկվելով: Հետո սկսեցի բարձրաձայնել դրանց մասին: Այս ամենին զուգահեռ, սկսեցի արժևորել կյանքս, հասկանալ իմ նպատակները, գնահատել իմ ցանկություններն ու ինձ, որպես մարդ և անհատականություն: Արդյունքում ուժեղացել եմ հոգեբանորեն, ինչպես նաև ֆիզիկապես:

Ովքե՞ր և ի՞նչ կազմակերպություններ են աջակցել Ձեզ, հաղթահարելու բռնության հետևանքները:

-Բռնության հետևանքները հաղթահարելու ճանապարհին ինձ հետ է եղել մոտիկ ընկերներիցս մեկը, կարելի է ասել, միակ մոտիկ ընկերս, որը միշտ լսել է ինձ, հասկացել ու աջակցել: Հետևելով նրա խորհրդին, կարևորել եմ ինձ ու սովորել արհամարհել հասարակական վատ մենթալիտետն ու տիրապետել «թքած ունենալու նուրբ արվեստին»: Ընկերս օգնել է նաև հարթել մորս հետ հարաբերությունները: Բազմից խոսել է մորս հետ: Արդյունքում՝ այսօր ավելի լավ հարաբերությունների մեջ եմ մորս հետ:

Կազմակերպությունների մասին շատ տեղյակ չեմ եղել: Գիտեի, որ կան կազմակերպություններ, որոնք մարդու իրավունքների ոլորտում են աշխատում: Այսօր մայրս ու ես լավ հարաբերություններ ունենք և մեզ երջանիկ ենք զգում:

Trans awareness week

Հարցազրույցների շարք տրանսգենդեր անձանց հետ

ՀԱՐՑԱԶՐՈՒՅՑՆԵՐԻ ՇԱՐՔ ՏՐԱՆՍԳԵՆԴԵՐ ԱՆՁԱՆՑ ՀԵՏ

«Իրավունքի կողմ» իրավապաշտպան հասարակական կազմակերպությունը, աշխատելով Տրանս ԼԳԲԻՔ+ և սեքս աշխատող անձանց հետ և նրանց նկատմամբ ՍԿԳԻ հիմքով բռնությունների կանխարգելման ոլորտում, հերթական անգամ արձանագրում է, որ վերոնշյալ խոցելի խմբի նկատմամբ բռնությունները չեն դադարել և մինչ օրս պարբերական բնույթ են կրում:

«Իրավունքի կողմ» ՀԿ-ն Տրանսգենդեր անձանց հիշատակի միջազգային օրվան ընդառաջ շարունակում է հարցազրույցների շարքը Տրանսգենդեր անձանց հետ:

Այս անգամ զրուցեցինք երևանաբնակ մի նույնասեռական ուսանողի հետ, ով, իր կյանքի ու առողջության անվտանգությունից ելնելով, չցանկացավ ներկայանալ: Տասնիննամյա տղան չի հերքում, որ իր նկատմամբ բռնություններ շատ են եղել: Միշտ հնարավորինս փորձել է կոծկել իր ինքնությունը՝ հաշվի առնելով, որ մինչ Երևանում ապրելը, բնակվել է մարզում:

-Մարզում բնակվելիս դատապարտված էի թաքուն ապրելու, որովհետև եթե փորձեի նույնիսկ ճղած կամ քիպ շալվար հագնել, «քյառթերը» առիթը բաց չէին թողնի կոնֆլիկտ ստեղծելու, հատկապես այն դեպքում, երբ ես հիմնականում չէի շփվում իրենց հետ, – պատմում է երիտասարդը – չնայած իմ նկատմամբ այդքան էլ վատ չէին տրամադրված, որովհետև եղբայրներս ու քեռիս, ոնց ասում են, ինձ մեջք էին կանգնում: Բոլորը գիտեին, որ ես էսինչ մարդու քրոջ տղան եմ: Այդ կերպ ես ապահովագրված էի: Սակայն հետագայում, մինչ կտեղափոխվեի քաղաք, իմ նկատմամբ բոլոր տեսակի բռնությունները դրսևորվեցին:

TDoR 2020

Նշեցիք, որ Ձեր նկատմամբ բոլոր տեսակի բռնությունները շատ են եղել, ու՞մ կողմից էին այդ բռնությունները:

-Ես տանից փախա, որովհետև հարազատներիցս մեկը մյուսներին ասել էր իմ ՍԿԳԻ-ի մասին: Հիշում եմ, Երևանում էի, մի քանի գործեր ունեի, երբ վերադարձա տուն, առանց որևէ խոսքի, թևիցս բռնեցին ու սկսեցին ծեծել: Ծեծում էր քեռիս, նրա տղան, մյուս եղբայրներս, մայրս, մի խոսքով, հավաքվել էին մոտ 20 հարազատներով ու բոլորը ստորացման ու ծեծի էին ենթարկում ինձ, այնքան ժամանակ մինչև ուշագնաց եղա: Այդ ամենը տևեց մի քանի ժամ, մեր տան սենյակներից մեկում, որտեղ ինձ փակի տակ էին պահել: Մայր ինձ ուշքի բերեց, ես այլևս չէի կարողանում խոսել, նույնիսկ ոտքի վրա կանգնել: Երբ ինձ հետ փորձում էին խոսել, չէի կարողանում ադեկվատ պատասխան տալ, արդյունքում տղաներից մի քանիսը, դե իհարկե իմ հարազատներից, թքեցին ինձ վրա, կրկին հարվածեցին այն ողջ ընթացքում, երբ ես ընկած էի հատակին: Նրանց ուզածն այն էր, որ ես ասեի, թե կփոխվեմ ու «տղա կդառնամ, ինձ տղու նման կպահեմ», այնուամենայնիվ չէի կարողանում նույնիսկ խոսալ: Վերջապես կարողացա ջուր խնդրել ու երբ դուրս եկան ինձ ջուր բերելու, պատուհանից ինձ դուրս նետեցի ու վազեցի, որքան ուժ մնացել էր ոտքերիս մեջ: Ամբողջ գյուղով ինձ էին փնտրում: Մղձավանջային օր էր դա ինձ համար:

Միայն ընտանիքի՞ կողմից եք ենթարկվել բռնությունների:

-Ոչ: Բռնություններ եղել են ոստիկանների ու այլ տղաների կողմից ևս: Օրինակ, ոստիկանությունում տևական ժամանակ ծաղրում էին շարժուձևս, արտաքին տեսքս: Բայց սրանք ոչինչ էին ընտանեկան բռնության համեմատ, – շարունակում է մեր զրուցակիցը՝ պատասխանելով իր վրա ունեցած բռնության ազդեցությունների վերաբերյալ մեր հարցին: – Ընտանիքիս կողմից բռնությունը շատ ազդեց ինձ վրա: Օրեր շարունակ չէի վերականգնվում: Ընկերներիցս մեկի տանն էի ապաստարան գտել, որն էլ ինձ աջակցում էր ամեն ինչով: Մինչև հիմա անհանգստություններ ունեմ ու տագնապներ, որոնք չեմ կարողանում հաղթահարել: Ինձ աջակցեցին իմ ընկերներն ու նրանցից մի քանիսի ընտանիքի անդամները: Դիմեցի համայնքահեն կազմակերպություններից մեկին, որի սոցիալական աշխատողը երկար աշխատանք տարավ մայրիկիս հետ, ստացա նաև ֆինանսական աջակցություն, ինչպես նաև իրավաբանական խորհրդատվություններ, որովհետև ի սկզբանե մտադրված էի հաղորդում ներկայացնել ընտանեկան բռնության վերաբերյալ: Հիմա ամեն ինչ նորմալ է, ես ինձ լավ եմ զգում, ունեմ աշխատանք, ապրում միայնակ: Ինձ ավելի լավ եմ զգում, քան երբևէ: Հետագայում տեղեկացա նաև «Իրավունքի կողմ» իրավապաշտպան ՀԿ-ի ու նրանց գործունեության մասին: Նրանք ևս իրենց պատրաստակամությունը հայտնեցին ամեն հարցով աջակցելու ինձ:

TDoR 2020

ՀԱՐՑԱԶՐՈՒՅՑՆԵՐԻ ՇԱՐՔ ՏՐԱՆՍԳԵՆԴԵՐ ԱՆՁԱՆՑ ՀԵՏ

Տրանսգենդեր անձանց հիշատակի օրվան ընդառաջ «Իրավունքի կողմ» իրավապաշտպան ՀԿ-ն Տրանսգենդեր անձանց հետ հարցազրույցների շարք իրականացնելիս այս անգամ զրուցեց Միլա Բենքսի հետ, որը Երևան է տեղափոխվել ապրելու իր Տրանս ընկերոջ հետ: Երևան տեղափոխվելու պատճառներից մեկն էլ խտրականությունից խուսափելն է:

Այն հարցին, թե արդյոք իր նկատմամբ բռնություններ եղել են իր կյանքի ընթացքում, Միլան պատասխանում է, որ չեն եղել այնպիսի բռնություններ, որոնց ինքը կարևորություն է տալիս, «հակառակ դեպքում եղել են հատուկենտ իրավիճակներ, որոնք առանձնապես ուշադրության կարիք չունեն», -պատասխանում է նա:

Ընտանիքի մասին խոսելիս Միլան նշում է. «Ինչ վերաբերում է ընտանիքիս անդամներին, նրանցից ոչ մեկը ոչ մի տեսակ բռնության ինձ չի ենթարկել, նրանք ինձ հարգում են, մենք լավ հարաբերություններ ունենք: Մենք գիտակցում ենք, որ մարդիկ տարբեր են», – իր խոսքն ավարտում է՝ հավելելով, որ չնայած այս ամենին, նա առանձին է բնակվում, իսկ նրա ընտանիքը լրիվ հասկանում է այդ հանգամանքը:

-Սակայն ականատես եմ եղել բռնությունների սենյակակցիս նկատմամբ: Հիշում եմ, որ սեքս աշխատանքի ընթացքում հերթական անգամ զանգահարեց մի հաճախորդ, որի հետ պայմանավորվեցին հանդիպել: Երբ հաճախորդը եկավ, պարզվեց նրա ընտանիքի անդամներից մեկն էր, որը սակայն մենակ չէր եկել: Փորձեցին նրան ծեծի ենթարկել: Ոստիկանություն կանչեցինք: Ոստիկանները եկան, հանդարտեցրին իրավիճակն ու հեռացան: Ես պնդում էի, որ ընկերս հաղորդում ներկայացնի դեպքի առթիվ, սակայն երկուսս էլ լավ գիտեինք, որ գործը կարճելու են:

#ԽոսումէՏՐԱՆՍ(լգբիք)+Համայնքը

Խոսելով մեկ այլ բռնության մասին՝ Միլան մի քանի րոպե դադար է տալիս, կարծես վերապրում է ամեն ինչ:

-Հաճախորդներից մեկը գողացել էր ընկերուհուս անձնագիրը, որի հետ միասին էինք ապրում: Պատկերացնում եք, գալիս են որպես հաճախորդ, հափշտակում ինչ-որ բաներ ու հեռանում: Մենք դիմեցինք տարածքային անձնագրային վարչություն և վերականգնեցինք անձնագիրը: Չեմ նշի, թե որ տարածքային վարչությունն էր, բայց ուզում եմ ասել, որ մեր նկատմամբ անձնագրային վարչությունում բարյացկամ էին ու աջակցող: Առանց որևէ խնդրի, հավուր պատշաճի իրականացրին անձնագիրը վերականգնելու գործընթացը:

Միլան չմոռացավ խոսել իր դժվարությունների մասին, որոնք չնայած ուղղակիորեն իր նկատմամբ դրսևորված բռնություններ չեն, սակայն, ընդհանուր առմամբ պահպանողականության ու խտրականության հետևանքներ են:

-Կորոնավիրուսային համաճարակի տարածման ու արտակարգ դրության ընթացքում ես այլ աշխատանք չունեի ու սեքս աշխատանքով էի զբաղվում: Բայց պարտադիր կարանտինը վատթարացրեց բոլորի աշխատանքը, հետևաբար նաև իմը: Հաճախորդներիս քանակը նվազեց, և օրեր շարունակ ոչ մի հաճախորդ չէի ունենում ու քանի որ վարձակալությամբ էի բնակարանը վերցրել, ուստի ստիպված եղա վարկ վերցնել բնակարանի ամսավճարը տալու համար: Մինչ օրս վարկի գումարն եմ մարում: Կուզենայի նշել, որ այդ բարդ իրավիճակում ինձ աջակցեց «Իրավունքի կողմ» հասարակական կազմակերպությունը՝ ֆինանսական աջակցություն տրամադրելով: Եթե չաջակցեին, միգուցե երկրորդ վարկը ստիպված կլինեի վերցնել:

«Իրավունքի կողմ» իրավապաշտպան ՀԿ-ն, կորոնավիրուսային համաճարակի ընթացքում աշխատելով մի շարք Տրանս ԼԳԲԻՔ+ և սեքս աշխատող անձանց հետ, արձանագրել է հարյուրավոր դեպքեր, երբ հատկապես Տրանսգենդեր սեքս աշխատող անձինք են տուժել՝ կորցնելով աշխատանքը և չկարողանալով ապահովել իրենց կյանքի մինիմալ պայմանները: Կազմակերպությունը, ակտիվ աշխատելով համաճարակի օրերին, սոցիալական, մարդասիրական և ֆինանսական աջակցություն է տրամադրել հարյուրավոր Տրանս սեքս աշխատող անձանց:

ՆՈՅԵՄԲԵՐԻՆ ՏԵՂԻ ՈՒՆԵՑԱԾ ՄԻՋԱՑԱՌՈՒՄՆԵՐԻ ՇԱՐՔ

«Իրավունքի կողմ» իրավապաշտպան ՀԿ-ն նոյեմբեր ամսին իր Տրանս ԼԳԲԻՔ+ ապահով տարածքում իրականացրել է միջացառումների շարք, որոնք ուղղված էին Տրանս ԼԳԲԻՔ+ և սեքս աշխատող անձանց իրազեկվածության մակարդակի բարձրացմանը, նրանց կարիքներին, ինչպես նաև բարեկեցությանն ու բարօրությանը: Մյուս կողմից, «Իրավունքի կողմ» ՀԿ-ն իրականացրել է սոցիալական աջակցության ծրագրեր, որոնց շրջանակներում ավելի քան 150 Տրանս ԼԳԲԻՔ+ և սեքս աշխատող, ինչպես նաև համախոհ անձինք ստացել են աջակցության փաթեթներ:

«Իրավունքի կողմ» ՀԿ-ն այս ամիս ակտիվ կերպով իրազեկել է Տրանս ԼԳԲԻՔ+ և սեքս աշխատող համայնքին մարդու իրավունքների վերաբերյալ՝ իրականացնելով 2 իրավաբանական խորհրդատվություն, իրավունքների մասին իրազեկումը շարունակվել է նաև նոյեմբերին կայացած «Տրանս Ճամբար 6» արտագնա դասընթացի ընթացքում: Իրավական կրթությանը և խորհրդատվություններին ներգրավվել են ավելի քան 58 Տրանս ԼԳԲԻՔ+ և սեքս աշխատող անձինք, համախոհներ, ինչպես նաև ԼԳԲՏՔ+ անձանց ծնողներ:

Կազմակերպության Տրանս համայնքային կենտրոնում իրականացվել են 2 ֆիլմի դիտում և քննարկում՝ ակտիվիզմի և տրանս անձանց կյանքի պատմությունների մասին: Դիտումներն իրականացվել են նոյմբերի 6-ին և 25-ին: Ֆիլմի դիտումներին ընդհանուր առմամբ մասնակցել են 25 Տրանս ԼԳԲԻՔ+ և սեքս աշխատող անձինք:

Շարունակելով կրթական և տեղեկատվական դասընթացները ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի և սեռավարակների վերաբերյալ՝ «Իրավունքի կողմ» իրավապաշտպան ՀԿ-ն նոյմբերի հինգին, տասնյոթին և քսանչորսին իրականացրել է հանդիպումներ, որոնց ժամանակ կազմակեևպության նախագահ Լիլիթ Մարտիրոսյանը Տրանս ԼԳԲԻՔ+ և սեքս աշխատող անձանց իրազեկել է սեռավարակների վերաբերյալ: Խոսվել է սեռավարակների ախտորոշման, հետազոտությունների և դրանց կանխարգելման մասին, ինչպես նաև ներկայացվել է, թե ԻԿՀԿ-ն ինչ ծառայություններ է մատուցում ՄԻԱՎ-ի կանխարգելման համար:

Նոյեմբերի 4-ին կազմակերպության տրանս ապահով տարածքում իրականացվել է «Պատերազմի ազդեցությունը 2» համայնքային հանդիպումը, որն ըստ էության շարունակությունն էր նախորդ ամիս իրականացված նույնանուն հանդիպման՝ հաշվի առնելով համայնքում կարիքն ու հետաքրքրվածությունը թեմայի շուրջ: Մասնակիցները շարունակեցին ներկայացնել իրենց հուզող հարցերը, բարձրաձայնել դրանք, քննարկել մի շարք իրավական բացերի վերաբերյալ հարցեր և այլն: Մասնակիցների հարցերը կազմակերպության իրավաբանին ստացան համապարփակ և բավարար պատասխաններ: Հանդիպմանը մասնակցում էին ավելի քան 16 Տրանս ԼԳԲԻՔ+ և սեքս աշխատող անձինք:

Կազմակերպության համայնքային կենտրոնում՝ համայնքի ցանկությամբ իրականացվել են երկու ինքնակազմակերպ միջոցառումներ: Նոյեմբերի 11-ին ազատ ձևաչափով իրականացված «Եթե ես լուսանկարիչ լինեի» խորագրի ներքո միջոցառման ընթացքում Տրանս ԼԳԲԻՔ+ և սեքս աշխատող անձինք խոսել են լուսանկարչության մասին, քննարկել լուսանկարչության պատմությունը և դիտել մի քանի հոլովակներ: Հանդիպումը մոդերացնում էր կազմակերպության համայնքի պատասխանատու Արտակ Ադամը: Իսկ նոյմբերի 18-ին իրականացված «Իմ մասնագիտության կարևորությունը» խորագրի ներքո հանդիպումն ակտիվ քննարկումների առիթ դարձավ մասնակիցների համար, քանի որ բոլորը փորձում էին իրենց տեղը գտնել հայաստանյան աշխատաշուկայում: Մասնակիցներից շատերը նշեցին, որ իրենք իրենց ցանկությամբ չեն ընտրել իրենց մասնագիտությունը և չեն սիրում այն, մյուս մասն էլ լրիվ հակառակ պնդումներ էր ներկայացնում: Քննարկման արդյունքում մասնակիցները փորձեցին կարևորել իրենց մասնագիտությունը և պլանավորել ապագան իրենց մասնագիտական ոլորտում հաջողակ կարիերա ձևավորելու համար: Երկու հանդիպումների ընթացքում ներկա են եղել 26 Տրանս ԼԳԲԻՔ+ և սեքս աշխատող անձինք:

Եվ վերջապես, նոյեմբեր ամսվա համայնքային վերջին հանդիպումը կրում էր «Ակտիվիզմի հեռանկարները Հայաստանում» խորագիրը, որն իրականացվել է նոյեմբերի 26-ին: «Իրավունքի կողմ» իրավապաշտպան ՀԿ-ն, շարունակելով արդի պահել ակտիվիմի մասին դիսկուրսը հայաստանյան իրականության մեջ, ամեն ամիս իրականացնում է քննարկումներ կամ միջոցառումներ, որոնք խթանում են տրանս ակտիվիստների իրազեկվածության մակարդակի բարձրացումը և Տրանս ակտիվիզմը Հայաստանում: Հանդիպմանը մասնակցում էին 11 Տրանս ԼԳԲԻՔ+ և սեքս աշխատող ակտիվիստներ:

«Իրավունքի կողմ» իրավապաշտպան ՀԿ-ն, համաճարակային և պատերազմական դրության ընթացքում կարևորելով Տրանս ԼԳԲԻՔ+ և սեքս աշխատող անձանց կարիքներն ու կրթությունը, շարունակում է հոգալ համայնքի մասին և ակտիվ պահել համայնքային տրանս ապահով տարածքը: Կազմակերպությունը շարունակում է իր կրթական, տեղեկատվական, իրավաբանական և սոցիալական միջոցառումների իրականացումը, որոնք նպաստում են Տրանս ԼԳԲԻՔ+ և սեքս աշխատող անձանց հիմնախնդիրների նվազեցմանը:

Հիշեցնենք, որ «Իրավունքի կողմ» իրավապաշտպան հասարակական կազմակերպության տրանս ապահով տարածքը բաց է երկուշաբթիից ուրբաթ, ժամը՝ 14:00-ից մինչև 17:00-ն:

ՆՈՅԵՄԲԵՐ ԱՄՍՎԱ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ԱՄՓՈՓԱԳԻՐ



«Իրավունքի կողմ» իրավապաշտպան ՀԿ տրանս համայնքային կենտրոն նոյեմբեր ամսվա ընթացքում այցելել են թվով **251** ՏՐԱՆՍ ԼԳԲԻՔ+ ԱՆՁ

«Իրավունքի կողմ» իրավապաշտպան ՀԿ-ն Տրանս ապահով տարածքում նոյմեբեր ամսվա ընթացքում իրականացրել է թվով 12 միջոցառում.

«Եթե ես լուսանկարիչ լինեի» համայնքային հանդիպմանը մասնակցել է 15 Տրանս ԼԳԲԻՔ+ և սեքս աշխատող անձ:

«Իմ մասնագիտության կարևորությունը» համայնքային հանդիպմանը թվով 11 Տրանս ԼԳԲԻՔ+ և սեքս աշխատող անձ:

«Տրանսգենդեր անձանց հիշատակի օր» համայնքայի հանդիպմանը թվով 10 անձ:

«Պատերազմի ազդեցությունը 2» համայնքայի հանդիպմանը թվով 16 անձ:

«Ակտիվիզմի հեռանկարները Հայաստանում» համայնքայի հանդիպմանը թվով 11 անձ:

«ՄԻԱՎ/ՁԻԱՀ և սեռավարակներ» թեմայով երկու հանդիպումներին թվով 37 Տրանս ԼԳԲԻՔ+ և սեքս աշխատող անձ:

Ֆիլմի դիտումներին թվով 25, իսկ իրավաբանական խորհրդատվություն ստացել է թվով 26 Տրանս ԼԳԲԻՔ+ և սեքս աշխատող անձինք:

«Իրավունքի կողմ» իրավապաշտպան ՀԿ-ն նոյեմբեր ամսվա ընթացքում ընդունել է թվով 251 Տրանս ԼԳԲԻՔ+ և սեքս աշխատող անձի, որոնք օգտվել են կազմակերպության կողմից իրականացվող իրավաբանական, կրթական և տեղեկատվական, սոցիալական ծրագրերի շրջանակներում տրամադրվող ծառայություններից:

Մեր ամսական ամփոփագրերին կարող եք ծանոթանալ մեր պաշտոնական կայքէջում և սոցիալական մեդիայում:

RIGHT SIDE

HUMAN RIGHTS DEFENDER NGO

www.RightSideNGO.com

rightsidengo@gmail.com

facebook.com/RightSideNGO/

twitter.com/RightSideNGO

instagram.com/RightSideNGO/

+374 - 11 - 880 - 770

©Copyright All Rights Reserved For Right Side Ngo.